

Քլոր	10,290	մաս,
Պրոմ	0,684	
Կալաքար կամ Սոսա ու Փոթաս	3,008	
Մագնետիա	2,355	
Կիր	1,424	
Բոլոր ազային նիւթերը	17,761	
Զուր	82,139	
Բոլորը	99,900	
Կորուստը 0,100		

Աւստի աս Սեռեալ ծովուն ջրին տեսակարար ծանրութիւնն է 1,212 : Սիայն թէ աս գիտնալու է որ ամառը քիչ անձրև գալով, և միանգամայն շատ շոգի վեր ելելով Սեռեալ ծովէն, ջուրը աւելի աղի կ'ըլլայ, որովհետև ջրին մէջի աղը ծանր ըլլալով՝ չկրնար շոգիին հետ մէկտեղ վեր ելել :

Շատ գեղեցիկ կը ստորագրէ Յովհանն Սկեբերան Պաղեստինու առջի վիճակը յիշելով՝ հիմակուան Սեռեալ ծովուն կողմերը .

« Երթեալ ուրուք իցէ ձեր 'ի պաղեստինացւոյ աշխարհն . զի՛նչ որ 'ի ձէնջ վկայեացէ ինձ, որոց զտեղիսն իսկ տեսեալ իցէ . քան զՍիկադոնի և քան զՊաղա 'ի վերոյ, անդ իսկ 'ի սպառուածի : Յորդանան գետոյ՝ վայրքն ինչ բազում են և ամենալիցք . մանաւանդ թէ էին, քանզի այժմ ոչ է նոյնպէս, որ երբեմն իբրև զգրախտն Ղստուծոյ էին : « Ետես, ասէ, Պ ովտ զամենայն կողմանս Յորդանանու՝ զի էին յուրթի իբրև զգրախտն Ղստուծոյ », . և արդ որ այնպէս ծաղկալից և ամենաշատ վայրքն էին, հակառակեալ ընդ ամենայն աշխարհի, և ժամանէին լիութեամբ գրախտն Ղստուծոյ, քան զամենայն անապատ անապատագոյն է այժմ : Կան ծառք և պտուղ ունին, և պտուղն բարկութեանն Ղստուծոյ յիշատակիչ է . կան նունենիք, և զփայտէն իսկ ասացից, և պտուղն գեղեցիկ իսկ երևի 'ի վերոյ, և զանտեղեակսն բազում յուսով լի առնէ . իսկ յորժամ 'ի ձեռն առեալ հատանիցէ, պտուղ ամենևին ինչ ոչ է, բայց մոխիր և փոշի շատ ցուցանէ 'ի ներքս ամբարեալ . այնպիսի է և երկիրն ամենայն : Եթէ քար

տեսանիցես, մոխրեալ գտանես . և զի՛նչ զքարէ և զփայտէ և զհողոյ, ուր զի և օղքն և ջուրքն զնոյն հարուածս կրեցին : Արպէս մարմնոյ ինչ այրեցելոյ ըզկերպարանսն և զնշմարանսն տեսանիցեն 'ի հուր, և զհասակն և զչափն և զօրութիւն ինչ ոչ, նոյնպէս և անդ զերկիրն է տեսանել . բայց չունին ինչ զերկրի, այլ ամենևին մոխիր . ծառս և պտուղս, այլ ոչ ինչ զծառոյ և զպտոյ . օդս և ջուրս, այլ ոչ ինչ զջրոյ և զօդոյ . քանզի և այն աճիւնացեալ : Եւստի և զիւրոյ իսկ երբէք այրեսցին օղքն կամ զիւրոյ ջուրքն, և ջուրն մնացէ . փայտի և քարի մարթի այրել, բայց օդոյ և ջրոյ չէ երբէք հնար : Սեղ չէ հնար, այլ Ղստուծոյ հնարաւոր է : Ղստուծու տե ոչ այլ ինչ է, թէ ոչ հնոց՝ օդն, և հնոց՝ ջուրն . ամենայն անպտուղ, բնաւ անձին, բոլոր 'ի պատիժս պատուհասից . կանուխ բարկութեանն պատկերք, հանդերձելոց նշանակք : Սի թէ և այն բանից սպառնալիք իցեն, մի թէ և այն խօսից ինչ վճիռք իցեն » :

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Չըհեղեղէն առաջ ծաղկած արհեստներուն ու գիտութիւններուն վրայ, և թէ անոնցմէ 'րբ ըհեղեղէն ետքը շարունակեմք սխալ :

ՏԱՐԵԿՈՅՍ չկայ որ մարդիկ ինչուան ջրհեղեղի ատեն, (որ ըստ եօթանասնից 2603 տարի է, և ըստ երբայեցւոյ 1658) ամէն հարկաւոր արհեստները ու գիտութիւնները ծաղկեցուցած էին : Եւ ասոր ապացոյց են ան արհեստները որ գտնուեցան աշխարհիս առջի դարերուն մէջ, որոնք որ սուրբ գիրքը գտնողներուն անունովը կը յիշէ . այսինքն երկրագործութիւնը՝ որ մարդուս ժամանակակից է, վասն զի Ղստուած երբ որ Ղստուծոյ գրախտն դուրս հանեց, հրամանեց իրեն որ երթայ երկիր բանէ .

լով իր հասցը գտնէ : կրնանք ըսել թէ գրախտին մէջ ալ կար երկրագործութիւնը՝ ոչ իբրև արուեստ այլ իբրև զբօսանք մը , մանաւանդ պարտիզպանութիւնը : Հովուութիւն՝ որուն ետևէ եղաւ նախ Մքել , և գտաւ վրան և տաղաւար շինելուն կերպը , որով դիւրաւ տեղէ տեղ կրնար փոխել իր բնակութիւնը տարւոյն այլևայլ եղանակներուն համեմատ . և ասով շատ զուարճալի եղաւ աս անմեղ արհեստը : Արաժշտութիւն՝ որ գտաւ Յոբաղ , և շինեց քնար և ուրիշ երաժշտական գործիքներ , ու երգեր հնարեց , և ասով մարդկային կենաց զուարճութիւնն աւելցաւ , և հովուական վիճակը քաղցրացաւ : Վարբնութիւն՝ որ գտաւ (Թ)ովբէլ , և սկսաւ երկրագործութեան պէտք եղած գործիքները շինել , որով երկրագործութիւնը աւելի ծաղկեցաւ . բայց ասոնցմէ շինեց ուրիշ այլևայլ երկրթէ ու պղնձէ գործիքներ ալ : Ուտայնանկութիւն կամ կտաւ գործել՝ որ հնարեց ասոնց քոյրը՝ Նոյեմա : Մ արհեստներէն զատ , որ ամենէն առաջ գտնուեցան , յայտնի է որ ատեն անցնելով ուրիշ շատ արհեստներ ալ հնարուած են , որոնք սուրբ գիրքը աւելորդ կը սեպէ մէկիկ մէկիկ յիշելը , թողլով մեզի որ անոնցմով ուրիշներն ալ մտկաբերենք :

Տարակոյս չկայ որ աս վերը յիշուած արհեստները երթալով աւելի ծաղկեցան . և պէտք է որ ջրհեղեղէն առաջ արհեստներն ու գիտութիւնները լաւ ծաղկած ըլլային , վասն զի ան ատեն մարդուս կենանքը խիստ երկայն ըլլալով , խելացի ու ճարտարամիտ մարդիկ կրնային շատ արհեստ ու գիտութիւն ծաղկեցնել և կատարելագործած թողլով իրենց գիւտը :

(Թ)Վպէտ և չկարենանք յայտնի որոշել թէ ինչ աստիճան կատարելագործած էին արհեստներն ու գիտութիւնները ջրհեղեղէն առաջ , բայց յայտնի կ'երևնայ որ վերի ըսած արհեստները , այսինքն երկրագործութիւն , հովուութիւն , երաժշտութիւն , դարբնութիւն ,

ուտայնանկութիւն , և ուրիշ ասոնց նման հարկաւոր արհեստները շատ ծաղկած էին :

Մէնքը կ'ընդունին թէ ջրհեղեղէն առաջ կար նաւուղութեան արհեստն ալ . վասն զի բաւական էր տեսնելը կենդանիի մը կամ տախտակի մը ջրին երեսը լողալը , և հովուն առաջ կամ ետև տանելու զօրութիւնը , և անկէց աս նաւուղութեան արհեստը գտնելը : Յայտնի է որ առջի բերան մարդիկ սկսան լստա շինել , ետքը պղտիկ նաւակներ , մակոյկներ , ետքը նաև մեծամեծ նաւեր ալ Սև ծովուն , Արամիր ծովուն , Սիջերկրականին ու Հնդկաց ծովուն և մեծամեծ գետերու մէջ ճամբորդութիւն ընելու համար : Մսկէց յայտնի կ'երևնայ որ ծովային վաճառականութիւնն ալ ծաղկած էր ան ատեն . վասն զի վաճառականութիւնը նաւուղութեամբ կ'ըլլայ : Վաւուղութեան արհեստին ջրհեղեղէն առաջ ալ ըլլալուն մէկ մեծ աւրացոյցն ալ է՝ Վոյայ տապանը , որ շատ կանոնաւոր ու ամուր ձևով շինած էր , երկայն ատեն ջրին երեսը կենալու ու սաստիկ քամիներու դէմ կռուելու համար :

Վոյնպէս ամէնքը կ'ընդունին թէ ջրհեղեղէն առաջ կար աստղաբաշխութեան գիտութիւնը , ըստ ոմանց գէթ առաջին սիզբունքները ու տեղեկութիւնները , մնլորակներուն կարգն ու շարժմունքը , և իրենց չըմաններուն միջոցը , աստղերուն ու արևուն փոփոխութիւնները , գիշերահաւասարներուն ու արևադարձներուն ժամանակները . վասն զի անոնց փոփոխութեամբ կը չափուի ժամանակն ու տարին ու եղանակաց փոփոխութիւնները , որ հարկաւոր էր գիտնալ երկիր մշակելու համար : Բայց ո՞վ գիտէ թէ ասկէ շատ աւելի ծաղկած չըլլայ աստղաբաշխութիւնը 2000 տարուան միջոց :

Բաց աս արհեստներէն և գիտութիւններէն ծաղկած կ'երևնան նաև ճարտարապետութիւն , օսկերչութիւն , քանդակագործութիւն , նկարչութիւն , և այլն . ուսմունքներէն՝ չափաբերական

գիտութիւնները , փիլիսոփայութիւն , բնաբանութիւն , և այլն : Ըստ չեմբ ուղեր ըսել թէ հիմայ ինչ գիտութիւն ու արհեստ որ կայ , ջրհեղեղէն առաջ ալ ծաղկած էր , վասն զի ջրհեղեղէն ինչուան հիմա եղած միջոցն ալ՝ որ գրեթէ 4000 տարի է , քիչ ժամանակ չէ ուսմունքներն ու արհեստները կատարելագործելու . բայց կրնայ ըլլալ որ նաև անանկ արհեստներ ու գիտութիւններ ջրհեղեղէն առաջ եղած ըլլան որ հիմա չկան , և հիմակուաններէն ոմանք նոյն ատենը գտնուած չըլլան :

Շատ հաւանական է որ նաև գրականութիւնը գտնուած էր ջրհեղեղէն առաջ , որ այնչափ հարկաւոր է մարդկային ընկերութեան՝ դիպուածները չմոռնալու և մտածածը ուրիշին և մանաւանդ հեռու տեղ եզողին իմացնելու համար : Ըստ միւս ըսուած Բլեքսանդրէն աւնելով՝ Լուսեբիոս կ'ըսէ իր ժամանակագրութեան մէջ , թէ՛ Երայ նաև շինելու հրաման տուողը , պատուիրեց՝ «Օ ամենայն զառաջինս և զմիջինս և զվերջինս մատենից փորել և դնել յԱրեգ քաղաքին Սիպարացոց » , որ կ'երևնայ թէ մեր Սպերն է , ըստ սուրբ գրոց Սովիեր . և թէ ջրհեղեղէն ետքը հրաման եղաւ « Լքթալ ՚ի Սիպարացոց քաղաքէն փորել հանել զմատենանս որ ծածկեալ կայցեն անդ , և տալ մարդկան , և եթէ տեղին յորում վայրի կային՝ հայոց աշխարհն է » : Եւ Յովսէփոս կը գրէ թէ ջրհեղեղէն ետև երկու սիւն մնացեր էր , որ Լնովսայ կ'ընծայուին , որոնց վրայ ջրհեղեղէն առաջ եղած մարդիկը փորած էին երկնային մարմնոց վրայ տեղեկութիւններ , և աս սիւներուն մէկ հատը նաև ինչուան իր ատենը մնացեր է եզեր : Ըստ վկայութեամբ չէ թէ միայն ջրհեղեղէն առաջ եղած գրականութիւնը կը ցուցուի , հասպա նաև ան ատենուան մարդկանց աստղաբաշխութեան ետև ըլլալը : Սալդոն ալ կ'ըսէ . « Լնծի

1 Եւսեր . Թ . 32,36 :

անշուշտ կ'երևնայ թէ ջրհեղեղէն առաջ աշխարհիս սկզբնէ ՚ի վեր կար գիրը , որն որ հաւանական կ'երևնայ թէ Երամ գտած ըլլայ , ուսկից սորվեցաւ Սէթ , անկէց անցաւ Երայն ու իրմէ ետևիններուն՝ աշխարհիս առջի լեզուին հետ . և աս գիրը մնաց ինչուան լեզուներուն խառնակու թեանը ատենը , երբ որ նոր լեզուներու հետ նոր գրեր ալ գտնուեցան . բայց առջի գիրը մնաց աննայ քովը որոնք որ առջի լեզուն ունէին » : Երայն կ'ըսէ Սովիոս թէ բայց ՚ի ուրիշ արհեստներէն գտաւ Երամ նաև գիր :

Գրականութեան ջրհեղեղէն առաջ ալ ըլլալը ցուցնելէն ետև , դառնանք ցուցնելու հիմա թէ ջրհեղեղէն ետև որ արհեստները նորէն շուտով սկսան :

Ջրհեղեղէն առաջ եղած արհեստներէն ու գիտութիւններէն շատը պէտք է որ Երայն ու իր տղոցը ձեռքովը նորէն սկսած ըլլան ջրհեղեղէն ետև . և աս բանիս վրայ ոչ ոք կը տարակուսի : Իսկ գրականութեան արհեստը՝ որուն վրայ աւելի տարակոյս կայ , Սովսէսին շատ առաջ գտնուած ըլլալը յայտնի է սուրբ գրքէն և արտաքին պատմիչներէն : Յայտնի է որ առջի բերան գրերը տգեղ ձևերով այլևայլ նշաններ էին , ետքը ամբողջ սրբագիրը՝ գտնուեցաւ , ամբողջ սրբագրէն ետև կէս սրբագիրը , անկէ ետև սովորական գիրը՝ որն որ Սովսէսի ժամանակ ալ կը գտնուէր :

Սովսէս հնգամատեանը գրեց փիւնիկեցոց գրովը , որն որ Սաղմոս Յունաստան բերեր էր . բայց Սովսէս ան գրերուն վրայ ուրիշ մէկ քանի գրեր ալ աւելցուց և քիչ մը կատարելագործեց : Ըստ Սովսէսին գտած այբուբենը՝ որով հնգամատեանը գրեց , Երայն լաւ անփոփոխ պահեցին ինչուան իրենց գերութեան ատենը , և ասով գրուե-

1 Սրբագիրը (hiéroglyphes) որ կը գտուի Երայն , մոմիաներուն վրայ և ուրիշ տեղեր , այլևայլ ձևով նշանագիրներ են , զոր օրինակ կուսքերու , մարդու , կենդանեաց , գործիքներու և այլն , որոնք ամենքն ալ զատ գատ նշանակութիւն ունին :

ցան՝ Վինուէ կամ Վաբելոն գերի եր-
թալէն առաջ գրուած սուրբ զրբերը :
Վաբելոնի գերութենէ ետե Վզրաս
քահանայապետը Սովսեսին այբուբե-
նին տեղ սկսաւ գործածել Վաղղէա-
ցոցը , որ գրեթէ նոյն էր , բայց աւելի
պարզ ըլլալուն համար դիւրին էր գրե-
լը . և բոլոր հին և վաւերական սուրբ
զրբին օրինակները աս գրով գրել տը-
ւաւ , թէպէտ Սամարացիք չընդունե-
ցան աս Վզրասին ըրածը , և պահեցին
Սովսեսին գտած գրերը :

Թէ որ Սովսեսի ժամանակը գիր
կար , յայտնի կ'երևնայ որ Սովսէս
հնգամատեանին մէջ պատմած բանե-
րէն շատ բան ալ բաց 'ի բերնէ բե-
րան անցած աւանդութիւններէն՝ ա-
ռեր է նաև զրբերէ . վասն զի անկա-
րելի է որ միայն աւանդութեամբ մնա-
ցած ըլլային կարգաւ աշխարհիս ըս-
տեղծմանն ինչուան իր ատեն այն-
չափ ծննդաբանութիւններ և ժամա-
նակագրական կարգը . ուստի պէտք է
ըսենք թէ իւրաքանչիւր ցեղին նահա-
պետը իր ցեղին ճիւղագրութիւնը որ-
դոց որդի գրով կ'աւանդէր ետքիննե-
րուն : Միկայ է սովորական ընդհա-
նուր կարծիքը , ինչպէս կ'ըսէ Ֆէօրի
Սարայեւացոց ու Վրիտտոնէից սո-
վորութեանց վրայ գրած զրբին մէջ .
« Յանհարիցն է եթէ զայնչափ բազ-
մութիւն թուոց զորս Սովսէս 'ի մա-
տենի իւրում արձանացուցանէ , կալեալ
իցէ յուշի այնր ժամանակի որերոյ .
զհասակ , ասեմ , տարեաց ամենայն նա-
հապետաց անդուստ յՄգամայ , զորոշ
թիւս սկզբան և վախճանի համաշ-
խարհական ջրհեղեղին , և զչափ տա-
պանին : Ըէ ինչ կարևոր ապաստան լի-
նէլ 'ի սքանչելիս և 'ի յայտնութիւնս .
այլ քաջ իսկ յայտնի է , զի հնարեալ
էր արուեստ գրականութեան նախ քան
զջրհեղեղն , որպէս զգործիս երաժըշ-
տականս , որ ոչ ինչ կարևորք էին մե-
ծապէս , » :

Թէ որ գրականութեան արհեստը
ջրհեղեղէն առաջ գտնուած ըլլայ , ինչ-
պէս որ ամենայն հաւանականութիւն

կայ , կ'երևնայ թէ Վոյ տապանը ա-
ռած էր նաև զրբեր , մանաւանդ Մգա-
մէն ինչուան իր ատենը եղած նահա-
պետներուն յիշատակարանները և ազ-
գաբանութիւնները :

Մ կարծիքով նաև ան հին աւան-
դութիւնը որ կայ , թէ Վոյ ջրհեղեղէն
ետե գրբեր գրած ըլլայ ու իր նաւար-
կութեան պատմութիւնը , ինչպէս որ
կ'ըսէ Սյորենացի Սամիլոգորոս փիլի-
սոփային բերնէն առած՝ , ճշմարտու-
թիւն մը կրնայ աւնել : Վա սլ որ ընդ-
ունի թէ ջրհեղեղէն առաջ գրականու-
թեան արհեստը գտնուած էր , պէտք
է ընդունի նաև թէ Վոյ ալ գիտէր , որ
նոյն ատենի խելացի ու հանձարեղ
մարդիկներէն մէկն էր , մանաւանդ թէ
առջինը : Մտով կը հետևի որ ինչպէս
արհեստներէն շատը Վոյայ ու իր տղո-
ցը ձեռքովը ջրհեղեղէն ետե մէկէն
նորէն սկսան , ասանկ ալ գրականու-
թեան գլխաւոր ու օգտակար արհեստը :

Տ . Մ . Ս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Խոյր պահելու կերպ :

ՄԱՍՆՈՑ համար խոտը երկար ատեն
անվնաս պահելու համար սովորական
հնարքներն են , մէյմը՝ քաղելուն պէս
դեռ բաւական չի չորցած վրայէ վրայ
չդիզել , որ քիչ ատենէ չսկսի տաքնալ
բորբոսիլ ու փտտիլ . մէյմըն ալ քա-
ղածը երկայն ատեն անձրևի տակ չը-
թողուլ , որ թրջուելով չաւրուի և
համը չկորսընցնէ : Վայց խելացի հը-
նարք մը գտեր է Սքաթեման անու-
նով գաւառապետ մը խոտը երկայն ա-
տեն անվնաս պահելու , որ առանց ա-
նոր՝ միայն աս վերի ըսած զգուշու-
թիւններով չէ կրցած առանց փտու-